Պատրաստվել կիրառել i-Ready ծրագիրը տանը ամռանը

Այս ծրագրին կարող եք ծանոթանալ՝ այցելելով ***bit.ly/iready-summer-english*** *կայքը*

i-Ready ծրագրի առցան (online) ուսուցումը ձեր աշակերտներին հասանելի կլինի ամռանը: Ծանոթացեք հետևյալ մանրամասներին, որ վերաբերում են աշակերտներին ամռանը i-Ready ծրագրից առավելագույնը օգտվելուն:

Ի՞նչն է հասանելի

Միայն առցանց դասերն են հասանելի: Որևէ քննություն չի լինելու ամռան ամիսների ընթացքի դասընթացների համար, քանի որ այն չի վերահսկվում: Եթե ձեր աշակերտը տարբերակ ունի սկսել քննությունը, խնդրում ենք կապ հաստատել Ռիշել Բեյլոնի հետ (rbailon@gusd.net կամ 818-241-3111 x1273), որպեսզի դադարեցնեք այդ հանձնարարությունը: Ամռան ընթացքում ուսումնական աջակցություն ստանալու համար, խնդրում ենք կապ հաստատել Դոկտոր Ստեփան Մխիթարյանի հետ (smekhitarian@gusd.net կամ 818-241-3111 x1557).

Ե՞րբ կկարողանանք օգտվել ծրագրից

Առցանց ուսուցումը հասանելի կլինի մինչև 2018թ. օգոստոսի 1-ը, և համակարգը կթարմացնի 2018-19 ուսումնական տարվա տեղեկությունները: Այդ օրվանից հետո աշակերտները չեն կարողանա օգտվել ծրագրից՝ մինչև աշնանը կվերադառնան դպրոց:

Հուլիս ամսվա վերջին (հստակ օրերը պետք է որոշվեն), i-Ready ծրագիրը լուրջ թարմացում է ունենալու: Այդ ընթացքում, հնարավոր է աշակերտները երբեմն չկարողանան օգտվել ծրագրից: Հավանաբար սա տեղի կունենա հանգստյան օրերի ընթացքում: Թարմացումից հետո աշակերտները ծրագրի որևէ խաթարում կամ փոփոխություն չեն ունենա: Այնուամենայնիվ, ուսուցիչներն ու դպրոցի ղեկավարները զգալի փոփոխություններ կտեսնեն:

Տեխնիկական ապահովման պահանջները

Համոզվելու համար, թե արդյոք տանը կիրառվող սարքը (երը) հնարավոր է օգտագործել i-Ready ծրագրի համար, խնդրում ենք փորձարկել համակարգը, որպեսզի համոզվեք համատեղելի է այն արդյոք դրա հետ: Խնդրում ենք ծանոթանալ սարքավորումների համար ծրագրի պահանջներին, համակարգներին և որոնման ծրագրերին: Խնդրում ենք կապ հաստատել Ռիշել Բեյլոնի հետ (rbailon@gusd.net կամ 818-241-3111 ներքին համար 1273) տեխնիկական խնդիրներ ունենալու դեպքում:

Ինչպե՞ս օգտվել ծրագրից

Այցելե՛ք https://login.i-ready.com/ կայքը և մուտքագրե՛ք ձեր օգտատերի անունն ու գաղտնաբառը: Օգտատերի անունը աշակերտի պետական տասանիշ ID համարն է, որի առջևից գրվում է «CA»: Օրինակ՝ 1234567890 համարի դեպքում, օգտատերի համարը կլինի հետևյալը՝ CA-1234567890: Գաղտնաբառը աշակերտի վեցանիշ պարունակող ID համարն է: Կարող եք կապ հաստատել Ռիշել Բեյլոնի հետ (rbailon@gusd.net կամ 818-241-3111 ներքին 1273) ծրագրի մեջ մուտք գործելու հետ կապված խնդիրներ ունենալու դեպքում:

Որտեղի՞ց կարող եմ ձեռք բերել ծրագրի վերաբերյալ նյութեր

Այցելե՛ք i-Ready-ի Home Connections էջը՝ http://i-readycentral.com/home-connections/